ը, որքան ժամանակ էին խլում նրանցից, երբ կարող էին աւելի օգտաւէտ, աւելի նպատակայարմար գործերով զբաղոած լինել:

— Ահա՛ այդպէս է լինում, — շարունակեց նա, — երբ հոգեւորականութիւնը չէ հասկանում, կամ չէ ցանկանում հասկանալ իր իսկական կոչումը, թէ ինքը Քրիստոսի եկեղեցու, այսինքն հաւատացեալ ժողովրդի սպասաւորն է եւ նրանից ընտրոած մի պաշտօնեայ, թէ իր բոլոր գործունէութիւնը պէտք է նուիրոած լինի նոյն եկեղեցու սպասաւորութեանը եւ բարեկարգութեանը, այդ դէպքում, նա շեղւում է ուղիղ ճանապարհից եւ ընկնում է մոլորութիւնների մէջ: Նա ծառայից դառնում է տէր, սկսում է իշխել եւ ծառայեցնել, ի հարկէ, ծառայեցնել իր շահերի համար: Այդ ժամանակ նա միանում է մարմնաւոր իշխանութեան հետ, որ իրան նոյնպէս տէր է համարում եւ նրա կողմն է բռնում: Որքան եւ անկարգ լինէր այդ իշխանութիւնը, այնքան աւելի նպաստաւոր է նրա համար: Ուրեմն, այլեւս ինչո՞ւ ենք զարմանում, որ մեր քաղաքի հոգեւոր առաջնորդը միացած է նահանգապետ փաշայի հետ, եւ ինքն էլ մի կողմից է կեղեքում խեղճ ժողովրդին...

— Ես փաշայի հետ տեսնոեցայ, — ասաց Ասլանը, — նա չափազանց խորամանկ մարդ երեւաց ինձ:

— Եւ խաբեբայ մարդ, — աւելացրեց Հայրիկը: — Ինչպէս ամէն թուրք պաշտօնակալ:

Երեկոյեան պահուն, երբ օդը փոքր-ինչ զովացաւ, Հայրիկը մեզ տարաւ եւ երկար ման էր ածում իր վանքի շրջակայքում: Մեծ բաւականութեամբ ցոյց էր տալիս նա այն բոլորը, ինչ որ արել էր եւ ինչ որ դիտաւորութիւն ունէր անելու: Այդ եռանդոտ մարդը այն տպաւորութիւնն էր գործում ինձ վրայ, որպէս մի լաւ հողագործ, որին ծանօթ են իր ագարակի բոլոր բոյսերը, բոլոր տունկերը, եւ որը գիտէ նրանց բնաւորութիւնը, ուսումնասիրել է նրանց կեանքը, եւ որը այնքան սիրում է նրանց, որպէս մի քնքուշ տիկին սիրում է իր ձեռքով ցանած եւ իր ձեռքով հասցրած ծաղիկները: Նա ցոյց էր տալիս այս եւ այն դաշտերը, ասելով.

— Ահա՛ այնտեղ սկսել են տորոնի մշակութիւնը, այդ առաջին փորձն է մեր կողմերում, որը մեծ արդիւնք է խոստանում, ահա՛ այնտեղ թթենիներ են տնկած, դիտաւորութիւն ունենք շերամապահութիւնը փորձել:

Խօսում էր գետնախնձորի մշակութեան մասին, ասելով.

— Գիտէ՞ք, պարոն բժշկապետ, մի քանի տարի առաջ գետնախնձորը այստեղ բոլորովին անծանօթ էր. մեր վանքը առաջինը եղաւ, որ սկսեց մշակել եւ մինչեւ այսօր մեծ դժուարութիւններ է կրում գիւղերում տարածելու: